ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1249-Ա « 05 » մարտի 2026թ.

ԱՐՑԱԽԻ ՊՈՂՈՏԱՅԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.10/1՝ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԻ Հ.211 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ԴԱՎԻԹ ԲԱԼԱՉՅԱՆԻՆ, ՀԵՆՐԻԿ ԲԱԼԱՉՅԱՆԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 15-րդ կետը, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետը և 2023 թվականի սեպտեմբերի 12-ի հ.856-Ա որոշումը.

1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Աջափնյակ վարչական շրջանի Ն.Սիսակյան փողոցի հ.16 շենքի հ.7՝ 62.1քմ մակերեսով երկու սենյականոց բնակարանը հատկացնել Դավիթ Բալաչյանին և Հենրիկ Բալաչյանին՝ սույն որոշման կայացումից 15-օրյա ժամկետում վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04022026-01-0088 վկայական) Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10/1 շենքի հ.211 բնակարանը Երևան համայնքին հանձնելու պայմանով:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Դավիթ Բալաչյանի և Հենրիկ Բալաչյանի հետ կնքել անշարժ գույքի փոխանակման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում բնակարանը Երևան համայնքին չհանձնելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի և Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ